ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 844 - Ա 18. ապրիլ 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ, ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, ինչպես նաև ի կատարումն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի թիվ 617-Ա (28.03.2014) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի թիվ 5-Ա (01.04.2014) համատեղ հրամանի՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետությունում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման գործողությունների ընթացակարգը»՝ համաձայն հավելված 1-ի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետերին և Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի թիվ 617-Ա (28.03.2014) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի թիվ 5-Ա (01.04.2014) համատեղ հրամանով զինկոմիսարիատներին կցագրված

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին (համաձայնությամբ)՝

1) ապահովել զորակոչիկների և նախազորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացումը՝ համաձայն հավելված 1-ի:

2) նախատեսել լրացուցիչ վարձատրություն զորակոչիկների և նախազորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացում ընդգրկված մասնագետների համար:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության պետ՝ Սարո Ծատուրյանին՝

1) ներկայացնել առաջարկություններ սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նախատեսված մասնագետների լրացուցիչ վարձատրման նպատակով, բժշկական կազմակերպությունների լրացուցիչ ֆինանսավորման և վարձատրման պայմանների վերաբերյալ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Վահան Պողոսյանին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ